

**ՍՈՒՐԲ Էջմիածնի ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ  
ԳՐԱԿԱՆ-ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ  
ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՏՊԱՐԱՆԸ\***

Հարևան ազգերի մեջ տեղի ունեցող անընդհատ պատերազմների պատճառով տնտեսական խիստ ծանր վիճակի մեջ էր գտնվում Մայր Աթոռու նաև Եփրեմ կաթողիկոսի օրով, որը երկու է 1819 թվին և Էջմիածնի միաբանության ուղղած նորա մի գրությունից, որով կաթողիկոսը, դրամական օգնություն էր խնդրում միաբանության անդամներից, թե՛ անհրաժեշտ ծախքերը կատարելու և թե՛ կուլտուրական հաստատությունները, հատկապես տպարանը, չեն պահելու: Այդ գրության մեջ նա ասում է.

«Ամենայն հետևողականությամբ պետք է աշխատել գործածել տպարանը չափավոր ծախսերով, որովհետև նորանով մեծ պարծանք պիտի վաստակենք ազգի մեջ. և նոցանից դորա համար օգնություն խնդրելը ամոր չէ թերում մեզ: Ուստի սորա գործածության օգնելու համար մեր միաբանների մեջ ով որ բավական դրամ ունի՝ թող փոխ տա (ընդգծումները մերն է—Ա. Ե. Ա.) թե մետուկով առանց շահի և կամ տասին մեկ շահով և նորանով էլ ես տուան յոր ժամանակին, մինչև Աստուծով տպած գրեթե դորս գան ու ծախսեն և եթե վճարումը անգամ ուշանա, գոնե սորբ Աթոռու նոցանից շահի մեղություն չկրի, ինչպես որ որիշ պարտատերերից կրում է»\*\*:

Նյութական այս ծանր դրության մեջ անգամ Մայր Աթոռի տպարանը լույս է ընծայել Ատենի ժամագիրք, Զեռաց ժամագիրք և Սաղմոս:

**ԺԱ**.

Հայաստանը, որին մի կողմից քրիստոնյա, մյուս կողմից մահմեդական իշխողներն էին իրեւ «հանդուգն առողներ» սնանկացնում իրենց ընչարացնությամբը, ուր փոփոխակի հարևան ազգերի պատերազմներն էին միմյանց հաջորդում և ամեն մեկը յոր կողմից նորանոր հարկեր էր դնում երկրի վեռա, այդ երկրում բաղարակրթության բարգավաճումն ու զարգացումը ժամանակավորապես պետք է կանգ առներ և տգիտությունը պիտի ծավալվեր թե հոգևորականների, ինչպես նաև Էջմիածնի միաբանների և թե աշխարհականների մեջ: Կյանքի անապահովության շնորհիվ՝ դպրոցական կյանքը կադուլով, պարզ է, որ բաղարակրթության մեծապես զարկ տվող տպագրական գործը ևս պիտի անուշադրության մատնվեր:

Հայաստանի և ս. Էջմիածնի այդ դրությունը գեղեցիկ կերպով նկարացրում են ելլորապական դեսպանությունի շքախմբի պարզ անդամները, որոնք Հայուսանի վերաբեր Պարսկաստան են անցել:

1817 թվին գեներալ Երմոլովի դեսպանությունն ուղևորվում էր Պարսկաստան Էջմիածնի վիայով. նորա դեսպանության մեջ էր գտնվում ուսական բանակում ծառայող Մորից Փոն Կոցերու, մի գերմանացի սպա: Էջմիածնում Եփրեմ կաթողիկոսը հյուրափրում է դեսպանությանը: Կոցերուն

\* Չարտունակված «Էջմիածն» ամսագրի 1972 թվականի №№ 7—8-ից:

\*\* Դիւն Հայոց պատմության, գիրը Ա—Բ, էջ 288—289:

մանրամասն նկարագրում է յոր ուղեգրության մեջ վանքի պատմական դրույթնը, կարողիկոսի և միարանության դրույթնը, որը մի շատ խիստ կարևոր հայուագիր է, և որը տպվել է ուղեգրության մեջ 1818 թվին գերմաներեն և 1819 թվին ամերիկան լեզուներով:

«Էջմիածնին պառկանող գյուղերը, ասում է Կողերուն, ուշադրության արժանի են իրենց հարստությամբ: Հիրավի, այսուղի վաղուց մի ծաղկաց քաղաք պիտի դառնար, եթե պարսկական կառավարությունը թույլ չտար Երևանի համանգի կառավարչին ըստ կամ կողոպտելու վանքը: Ես համոզված եմ, որ թագավորը, որ մեծ ու պատվավոր մտքի տեր է, անուշյակ է այս հրեշի (Երևանի Սարդարի) արարքներին, եթե ոչ մինչև հիմա նա այս շրջանի խեղճ բանակիներին ազատած էր նրա կամակոր բոնություններից: Այս սատրապը իր իշխանության շրջանում հավաքել է անսամբան հարստություն, որ չի կարող վավերել իր ծննդության պատճառով: Սակայն, ըստ սովորության նա շարունակում է կողոպտել ժողովրդին և վանքին. իր սրտի իրական գործունակության համար նա այս դրույթունը այնքան հեռուներն է տանում, որ ստիպում է վանքին մի մեծ գումար վճարել, եթե իմանում է, որ մի քիչսույն հանապարհորդ մի գիշեր այստեղ է մնացել: Որքան տառապած են այս մարդիկ, մեզ ընծայած հյուրը նկալության համար:

Եթե նա իր ամենօրյա հարստահարությունների համար պատրվակ չունի, կարգադրում է որորդության գնազ Երևանից և ճանապարհին այցելում է վանք: Այս պատիվը պետք է որ շատ բանկ վճարվի: Իր մարդկանցից շատերը, որ որիշ տեղ գիճի չեն կարող ճարել, օրերով խմբովին հաստատվում են այսուղի, որպեսզի հարբեցողությամբ անկարգ կյանք անցնեն, մի բան, որ նրանց կրոնը որոշակեած արգելում է: Եթե նրանց բոլոր պահանջների գոհացում չորսի, նրանք սպառնում են սուս տեղեկանք տալ կառավարչին, որ իմարկեան անմիջապես դրամական տուգամքի է ենթարկում: Այսպես, հայ քրիստոնեության սրբավայրը հարատևորեն մատնված է մի անարգ մարդու բռնապետական հարստահարություններին, մի մարդ, որ միաժամանակ հանանգի ամսնից տիտրառոչակ արքեցողն է: Խեղճ պատրիարքը շատ վշտացած է, տեսնելով որ բարեպաշտ քրիստոնյաների նվիրատվությունները ամեն օր քամզում են այսպիսի անարժան ճապատակների համար: Արդեն պետք է զգացվում գործածել վանքի հին ֆոնդերը, առօրյա ծախքեր կատարելու համար. բայց նրա բոլոր անդամները վճռել են համբերությամբ տառապել, և երբեք նույնիսկ եթե բոլոր արքյունները սպառվեն, չքել այս նվիրական բնակավայրը որքան ժամանակ Սատված ուժ ու կարություն տա իրենց»\*:

Կողերուի տված արժեքավոր տեղեկությանց հակառակ 1810, 11 և 12 թվերին Պարսկաստանում գործող անգիտական դիվանագիտական մարմնին պատկանող սըր Ուիլիլմ Սուոլեյ, յոր երեք հաստոր ուղեգրության մեջ, որ տպվել է 1819 թվին, լինելով Էջմիածնի վանքում և հյուրասիրվելով, Ակարագորում է վանքը և ժամանակի իշխողների վերաբերմունքը: «Նրանց նզոր դրացին Սարդարը,— ասում է Սուոլեյ միամտորեն,— որ ինձ նկարագրեց այս սուրբ հայուերին որպես բարի և բարեպաշտ մարդիկ,— միշտ բարեսըրտությամբ է վարվել նրանց հետ և արտոնել է նրանց պաշտպանության համար երկու հարյուր հոգիանց մի պահակախումբ, մերժած է նրանց կողմից առաջարկած նվերները»\*\*: Ուրեմն Սարդարը, ըստ Աուզելի ասության,

\* Ուղեգրություններ, հատ. 2, ԺԹ դար, էջ 528—80:

\*\* ԱՅդ, էջ 461:

այնքան բարյացակամ է եղել դեպի վաճքը, որ կաթողիկոսի և վաճքի կողմից տրված նվերներն անգամ չի ստացել:

Մինչդեռ Մորիերը, Կողերուն և ուրիշները պատմում են թե Երևանի Սարդարը ուղղակի և անողղակի միջոցներով կողոպտում էր Էջմիածնի վաճքը: Այս երկու տեղեկություններն ել կարող են ուղիղ լինել: Սարդարը օժանդակում էր և թույլ էր տալիս հոգևորականներին հարստանալու և ապա նրանցից ստանալու իր բաժինը:



Ժամագիրը ատենի, ս. Էջմիածն, 1785 թ.

Էջմիածնի պետական արխիվում կան բավական փաստաթյուր պարսիկ խանի կատարած կողոպտութերի մասին:

Էջմիածնի պետական արխիվ, վավերագիր № 2668, 1821 թ. հաշվեցուակ, որի վերնագիրն է.

«Հանգամանք պարտուցն Աթոռոյ, թէ որպէս եղև որ յառաջացան և դիզ-  
ուեցան, որ անհնարին եղև վճարումն, նշանակի նամառուին.— 1809 ամի  
Ապագ Միրզան Յ հազար մարդով քակել տայ արևմտու և հիստիային կողմն  
թերդի Աթոռոյ, կաշառօք աղաչն սինօթական 800 թուման. 1811 ամի բռնի  
պարսիկը ճափիմայ (տոգանք) առին Աթոռէս պարտիք վճարեցաւ—1000  
թուման.

1820 ամի Հասան խանն անծածկարար բռնի ճափիմայ առա Աթոռէն  
1200 թուման. 1810 ամի մինչև 1821 ամն մաղթայ տուաք պարտիք տա-  
րին 400 թուման ջամ (գումարն) 4,400 թուման»:

Մի այլ վավերագիր.

Էջմ. պետ. արխիվ, վավերագիր № 2560, 1828 թ.

Վավերագիրը պարունակում է պարսիկ խանի բռնությամբ խած նանք  
գումարների հաշիվը: Վավերագիրը թերու ենք ամբողջությամբ:

«Ի սր. Էջմիածնայ տարեալ է բռնութեամբ (ամունը ամվերծանելի, թվում  
է Ապագ) Ղուկի խանն զոր ի Եղբայ նշանակեալն.

1810 ամի բռնի տարեալ է ի Ներսէս սրբազնէն 50 թուման նայու.

1826 ամի հոկտ. 1-ին բռնի տարեալ է սադաֆակապ փայտէ չաքմաք-  
չայն (արկոյ) 50 թուման.

1826 ամի հոկտ. բռնի տարեալ է 45 թուման.

1826 ամի 8 թուման.

1824 բռնի լուսարար սրբազնան Յովհաննէս Հօրէն առեալ է 9 թուման

50 թուման

45 >

50 >

8 >

9 >

182 թուման

Գումարն լինի հարիդ վաթսուն և ներկու թուման: Զայս գրեալն հանեալ Էջ-  
միածնայ ժուոնալէն զրեցի աստէն 1828 դեկտ. 4: Վեհապետեան Յովհէփ  
վլոյ.»\*:

Կողերուի և Մորիկնի նկարագրած Էջմիածնի վանքի ծանր դրությունը  
շարունակվում է մինչև պարսկական տիրապետության վերջը: Մանուկ վար-  
դապետ Կյումուշանեցին յոր կենագրության մեջ պատմում է 1827 թվի  
օգոստոս-սեպտեմբեր ամիսներին տեղի ունեցած ոռուաց և պարսից կոփի-  
ների մասին, յու ինչպես Ապագ Միրզան հարձակվում է Էջմիածնի վերա  
և գեներալ Կրասովսկինը նորա դեմ դորս գալով այգիների մոտ մեծ կոփի  
է տեղի ունենում, որ տևում է 17 ժամ: Պարսիկները չնայած իրենց բազմու-  
թյանը, հայշվում են և փախչում, մյուս կողմից Պասկեփչը Սպասարապատը  
գրավելուց հետո՝ զայս միանում է Կրասովսկու զորքի մեջ և Ներսէս ար-  
քեպիսկոպոս Աշտարակեցու խորհրդով նախ Սարդարապատի վրա են հար-  
ձակվում և վերցնում, որտեղ Հյուսին սարդարն էր նստում և ապա միասին  
Երևանի վերա հարձակվում, որտեղ Հասան խանն էր նստում: Բերդը վերց-  
նում են հոկտեմբերի 1-ին և ազատում գերի տարված եպիսկոպոսներին: Երևանը վերցնելուց հետո ինքը Կյումուշանեցին հոկտ. 8-ին գնում է Երևան  
Ներսէս արքեպիսկոպոսին տեսության, նորա մոտ տեսնում է նաև ազատ-  
ված արքեպիսկոպոսներին, ուստի և յոր պատմության մեջ ավելացնում է.

\* Պողոսիական պատ. Զ, 498—94, ծան. 15: Տես Զաք նույն գրքի էջ 641—42, 784:

«Յիրում տեսաք և զնախերէց զարքեափիսկոպոսն յԱթոռոյն, որը ի Սարդարէ կալանառեալը, յոգիս մնացեալը ապաստան՝ խրեկոյ, և բռա-  
ւոտ մահու իրեանց ակնկալեալը, ազատ և ուրախ առ Ներսէսի՝ գոհո-  
թեամբ փառ մասուցանչին առենակալ Արարշի...»\*:



Գիրք ժամակարգութեանց, ս. Էջմիածին, 1785 թ.

Ասք նկարագրելով թե ինչ ուրախություն էր տիրում և ինչ երկնածիր շնորհի էր արժանացել Հայաստանը, որի հետևանքով Ներսէս արքեափիսկո-  
պոսը մի եռուն գործունեություն էր սկսել, ինըն է Մայր Աթոռում հատած  
յուր աշքերով տեսածն է գրի առնում, որի հետևանքով Երևանի խանի թա-  
յանչի կառավարության և ճնշումների շնորհիվ Մայր Աթոռի վերա մնա-  
գումար պարտքն էին դիզլիւ:

\* Դիան Հայոց պատմութեան, գիրք ԺԲ, Մանուկ Կիսմիշխանեցի, մասն Ա, Թիֆլիս,  
1917, էջ 91:

«Առանք ևս յայն,— գրում է Կյումրտշխանեցին,— եթք օրըատօրէ խելամուս եղեալ կշուղառէար զազգային պարծանաց տնդի զԱրոռու հոչսկառ անշքացեալ՝ խրթնութեամբ, յամենայն յուսացի բարելաւութեանց, հայլէր և մաշիր ուկերք և զօրութիւնք կենսականիս և ապշէր դատողութիւն բանականիս:

Քանզի ըստ վերոյ գրեցելոյս՝ կուտակութիւնք տոկոսաբարդ անպատճան պարտուցն Աթոռոյն, որ ի բատատն և չորս հազարից ի տասն և վեց հազարսն դադարեալն էր ի բացակարութեան կաթուղիկոսին, աթոռայինք սարդարի զօրութեամբն պարմանադիր եղեալ էին 1827 ամին, չորս ամիսն մի բաժին հատուցմամբ մեկ տարու բոլորութեանն վճարել զամենայն. հասնեալ առաջին յամադրեալ ամիսն կամ տրէքն, ոչ կարելով հատուցանել, բոռն հարեալ ի սրբութեան անօթսն, ի խաչ, ի սկիճ, ի բորվառ, ի շաբ, ի պատկեր, ի սաղավարտ և յաջ, մինչ զի և ի զարմանագործ շինուած սըրբալոյս մեռնի մեծ արծարթեայ խալկինն, գմբէթաւոր ծածկոցին ի նուիրակութեանն Դանիէլ կաթուղիկոսի յիշատակովք բարեպաշտ մերազմէից շինեցեալն, առհասարակ շարդեալ և հալեալ անհարազատ ձեռօր և զեռյն արծարիսն, որ կրկնապատիկ վարժիր շինեցեալք էին, վերստին սպրդարի դրսմանաւ զարպիսանայն վարձ տալով՝ Պարսից փող ձևացոցեալ հասուցեալ ևս զնոպաշին նուագ տալիսն պարտատեարց և տարակուսեալ վասն երկրորդի նուազին և ալլոց, վասնզի ըստ վկայութեան երեսի միաբանութեանց այն հալեցեալքն բաւականութեան ոչ տալով գումարին, և առհասարակ ի միաբան վելարատորաց ըստ կարծեալ կարողութեանց իթք պարտու ծողովեալ հասուցեալ են այլազգեաց, բայց թէ ի շարդեկ և ի հալելն ակոնք, և մարգարիտք, որքա՞ն առ գործակալսն ժողովեալք են, որոց սուազինն էր Արդութեանց Ստելիաննու վարդապետն, այնորիկ գրեալք կան յիւրաքանչիւրոց խղճահարութեան տումարուն»\*:

Հարստահարութեանց այսայիսի ծանր վիճակում գտնվող ու բռնությանց շարունակ ենթակա Մայր Աթոռից ով կարող էր լուսավորություն տարածելու և խալքարը վանելու պահանջմներ անել, եթք մարդիկ ֆիզիկական գոյությունը սպանամենուց զատ, որիշ բանի մասին մտածել չէին կարող: Այդ դրության հետևանքով պետք է համատարած տղիտություն տարածվեր թէ՛ հոգևորականության և թէ՛ աշխարհականների մեջ: Այդ տիսոր պատկերն է շեշտում Հոլվակիս աղա Լազարյանն 1817 թվին Թիֆլիսի սուազնորդ Ներսես արքայիսկուրում գրած յոր մի նամակով, որտեղ ասում է.

«Վարդապետաց մերոց և բահանայից այնքան ուսուցանել աղաջելով և պալատելով, որ գոնէ զուսան պատուիրան Տեառն և զեօթն խորհուրդն եկեղեցոյ մերոյ և զդաւանութիւնն գիտացեն (Ընդգծումները մերն են.—Ա. Ե. Ս.)՝ ի մերազմնայ աշխարհականաց ի նոցանէ երեսմն հարցումն ինչ առնելոյն լուծցեան զտարակուսանն հարցողին զի այսու փակեսից դուռն առ լատինս գնալոյս...»\*\*:

Դժախիստաքար այս դրությունը երկար է տևում և երեսնական թվականներին է Էջմիածինը նոյն անմիտաք դրության մեջ էր գտնվում, ինչպես նկարագրում են Մսեր Մսերյանը և Մանուկ վարդապետ Կյումրտշխանեցին:

Նոյն դրությունն է նկարագրում նաև Էջմիածնի միաբան Կ. Պոլսի Աստ-

\* ԱՅՀ, Է. 82—83:

\*\* Արհամակես ներխու. Սեղրական, Հովհաննես նախակ. Օսմիսաթունյանցի կննագրությունը, ս. Պատկրաբարդ, 1898, էջ 4:

վաճառոր պատրիարքը յոր մի գրության մեջ նիրեմ կարողիկոսին ուղղած, որի մեջ առաջ է քերում այն նախատիմքը, որ ինքը կրում էր Կ. Պոլսում Մայր Աթոռի միաբանության ամսառմանության համար, թե՛ մերայիններից և թե՛ օտարներից: Ուստի և խնդրում է կարողիկոսին այլևս երկու կամ երեք



Յովսեպոս Փարփոս. Գիք պատմութեանց. ս. Էջմիածին, 1787 թ.

տարի ժամանակ տալ իրեն, այնունշան մնալու, որպեսզի ինքը կարողանա նարկավոր գիտությունն ու հմտությունը ձեռք բերել, լեզուների մեջ օտարների նախատիմքից ազատվելու համար:

«Ի վերջոյ ազդ առնեմք, — գրում է պատրիարքը, — Տեսանդ մերոյ զայս ինչ նարկաւորաբար, զի առանիկ մերձեցաւ ժամանակ կատարման գործոյ

մերոյ նորիակութեան, և մեզ ևս հարկադրի մնալ աստեն տակախն գեր մինչև ցերեկո կամ երեք ամ, վասնզի ի սկզբան ի գալատնեն մերսէ ասու մինչ ցածն նախատակոծ լինիմք ի մերայնոցն ամենեցուն սակա անուստմանութեան բազմագումար միարանութեան մերոյ, և գրեթէ բազումք ևս ի մերայնոցն ի սոյն պատճառ միամուարար գարօնկին ի մեզ և գրորին ի խորխորաս ի մէշ նեստելոցն, ոյք սակա և մեր շարժեալ ի նախանձ բարի և ի սէր ազգին կամելով ի ձեռու բերել ինչ ինչ հարկադր և պիտանի գիտութիւնս և լեզուա- գիտութիւնս, առարեցար զմին յաշակերտաց մերոց զլրիստակէն անոն ի Զմիրոնիս, որում յատ ստանալոյն զհայկական լիովին առ ուսու Տէր Յօհան մեծանուն վարժապետի, մուեալ է հրամանա մեր և ի ձեմարան գաղիացց և վարժի արիաջան տրնութեամք և լուսամք եթէ զենի երկուց ամաց կառա- րեալ ուսանիլ ունի զայն լեզու հանդերձ բառականին գիտութեամքը: Զմիս տիրացու Արքահամ, որ յտու աստեն լրացուցանելոյն զքերականութիւնն մեր լեզուի, ուսեալ է ինչ ինչ ի մաթեմատիկան գիտութունն զգիճն, զթուարագու- թիւնն, զումարագիտութիւնն և տեսական երկրաշափութիւնն և այժմ պա- րապի ի լեզու տառեկան, զի ևս լուսաւորեսցին այնորիկ գիտութեամքը, որոյ երախայրի ասանիկ վաստակոցն...»\*:

Այս անեղ դրություննից դուրս գալու համար է, երևի, որ Ներսես Աշուա- րակեցին 1812 թվին Էջմիածնում «շինեց մի դպրոց 50 ժառանգավորաց հա- մար և մտադիր էր, որպես ինքն է գրում, բանալ «համալսարան» 200 ուսա- նողաց համար»\*\*: Ապա Ներսեսը Թիֆլիսի առաջնորդ դատմալով Ժթ դարի առաջին քառորդին իրու հեռատես, խելոք, գործունյա և եռանդուն անձնա- վորություն, մեծ ջանք է բախում յե՛ հոգևորականության և թե՛ հայ ազգի մանուկների մուավոր և բարյալան կյամքը և նոցա գիտության աստիճանը բարձրացնելու համար և Թիֆլիսում 1824 թվին<sup>11</sup> Ազգային հոգևոր դպրոց է բաց անում, որ հետո յուր անունով «Ներսիսյան» է կոչվում: Դպրոցը հիմնե- լուց հետո շատ հավանական է, որ Ներսեսը հետևել է հան տպարան բաց անելը հաջողեցնել: Գուցն և նորա ներշնչման հետևանքն է, որ Գևորգ աղա Արծրունին Եվրոպայում եղած ժամանակ, երբ լսում է, թե Ամստերդամում, հայոց նկեղեցում, Ուկանի և Վանանդեցու մի ժամանակ գործող տպարանը յուր բոլոր պարագաներով փականքի տակ է պարտքի պատճառով, գնում է տպարանի ամրող գույքը և բերում Թիֆլիս ու նվեր տալիս Ներսես Աշուա- րակեցու հիմնած դպրոցին: Տպարանն սկսում է աշխատել դպրոցին կից կոչ- վելով «Տպարան ուսումնարանի Հայոց ընծայեցելու յազնական Գէորգայ Երեմեան Արծրունոյ»\*\*\*:

Արծրունին բերել էր տպարանական բոլոր պարագաների հետ միայն մի փոքրիկ փայտոյ մամուլ, ուստի և Ներսեսը յուր միջոցներով ձեռք է բերում

\* Ա. Ե., էջ 8—9:

\*\* Ա. Ե. Երիցեան. Պատմութիւն 75-ամեայ գոյութեան Ներսեսեան Հայոց Հոգևոր դպրոցի, որ ի Թիֆլիս (1824—1889 թթ.), Բատ. Ա, Թիֆլիս, 1898, էջ 9:

\*\*\* 1828 թվին «Ներսիսյան դպրանոցի» տպարանում լուս տեսած Զամշյանի Քերակա- նության Բիշատակարանում տպված է: «Եւ յտեալ վասն սոյն տպարանի Հայոց լինելոյ յԱմստերդամ քաղաքի ի ներոյ Կերոյ Նապոլէօս Բօնօփարքի՝ առ որումն Հոլանդացոյ՝ հասանէ անոր և ոչ խնայեալ զգին այնորիկ կամ զգախսն ընդ ցամաքին երկար ճանա- պարտությունինս, ինքնայրորդոր սիրով ազգական բարերարութեանց գնեալ զայն զարդո- վատիկ և զպնձեայ նախագաղափարան Բայր և Մայր կոչեցեալ՝ հանդերձ բառական կա- պարայ ծովեալ ձագուր և ինչ ինչ պարագայից գործարանին և բերեալ ընդ իր ի Տիֆլիս ընծայէ նորակերտ ուսումնարանին...» (Հ. Ա. Վ. Զամշյանց, քերականութիւն Հայկական նորմի...ի Տիֆլիս 1828, էջ 587 (Հիշատակարան):

մի մեծ մասով ևս և մյուս պակաս իրեղենները: Արծրունու օրինակով իշխան Աղամազ Խոչա Մինայանը և ընծայում է ոռակերեն տառերի պղնձե մայրերը նոյն տպարանին: Ներսեսը հարատացնում է տպարանը նաև վրացե-



Ծաղակնոց. ս. Էջմիածին. 1789 թ.

րեն, պարսկերեն և լատիներեն տառերով: Ներսեսի հիմնած տպարանը Թիֆլիսում գործում է 1824—1830 թվականները:

Երբ Ներսես Աշտարակեցին Բեսարարիա տեղափոխվեց և Կարքեցի Հովհաննես եպիսկոպոսը Թիֆլիսի առաջնորդ դարձավ, վերջինս, որ Ներ-

և սի հակառակորդներից էր, Ներսեսի հիմնած թե՛ դպրոցը և թե՛ տպարանը անուշադրության մատնեց: Այս դրույքան մեջ մնում է տպարանը մինչև 1841 թվականը, երբ Թիֆլիսի առաջնորդ է դառնում Արգրումցի Կարապետ արքեպիսկոպոսը, որը տպարանը կարգի է թերում և գործունեության մեջ դնում: Դուք երբ Ներսեսը կաթողիկոս է ընտրվում, նորա հրամանով տպարանը վերանորոգվում է և յուր գործունեությունը շարունակվում մինչև 1870 թվականը, երբ դպրոցի հոգաբարձությունը տպարանը վերջնականացնելու վաճառում է Հ. Էնֆիամյանի<sup>\*</sup>:

Մինչդեռ Ներսես Աշտարակեցին Թիֆլիսում դպրանոց և տպարան հիմնելով կոլտուր-կրթական նոր կրամքի հիմք է դնում, Էջմիածնի տպարանն էլ երբեմն լավ, երբեմն վատ շարունակում է յուր գոյությունը: Եփրեմ կաթողիկոսի օրով Էջմիածնի միարան Փիլիպոս վարդապետը, որ Ներսեսի բարեկամն էր, և կաթողիկությունից դարձած Սերովք վարդապետը, որ մի զիտնական մարդ էր, Էջմիածնում մնալով միահամուն ջանքերով վերականգնում են Սիմեոն կաթողիկոսի օրերից գոյություն ունեցող «Ժառանգավորաց» դպրոցն ու տպարանը<sup>\*\*</sup>: Դորանից հետո տպարանը յուր գոյությունը ու գործունեությունը շարունակել է ամենին: Այսող մի ժամանակ կառավարիչի պաշտոն է վարել նաև Հովհաննես եախկոպոս Շահմասթունյանը<sup>\*\*\*</sup>: Դժբախտարար պատմությունը չի պահել, թե ԺԹ դարի առաջին քառորդում ի՞նչ հրատարակություններ են լույս տեսել Մայր Աթոռի տպարանից:

## ԺԲ

Ռուս-պարսկական պատերազմը վերջանալոց հետո Հայաստանի մի մարդ 1828 թվին ընկնառ է Ռուսաց իշխանության տակ: Դորանից հետո միայն տևական խաղաղություն է հաստատվում Հայաստանում ոստիական հովանավորության ներքո: Հայ ժողովորի քաղաքակրթության և մանավանդ Մայր Աթոռի միարանության կրոնական կյանքի վերածնության համար այդ ազատությունը պատմական մեծ արժեք ունեցող հանգամանք պիտի լիներ: Հայ ազգի այդ ժամանակի մտավորական ուժերը սպասում էին, որ Էջմիածնը ազատվելով պարսկական լծից և ազատ շունչ քաշելով, դպրոցն ու տպարանը իրեն քաղաքակրթության կենտրոն գործունենալիք էին, հետզհետև ծաղկման ու բարգավաճման ուղղ վրա պիտի դնեն և հոգևորականության մեջ տիրող տգիտությունը վերացնեն:

Այդ բաղանքն են արտահայտել Լազարյան եղբայրները Հովհաննես և Կարքեցի կաթողիկոսին, 1882 թվի փետր. 4-ին գրած մի նամակում, «անհանգիստ ակնկալութեամբ սպասեմք, մանաւանդ թէ հաւատամբ տեսանելն ձեր ձեռամբ զառաջին բարեկարգությունն տեսլուց ըստ հոգևորին և ըստ մարմնաւորին, զի վերստին ծաղկեսցի առ ձեր հոգևոր դպրատուն վասն վարդապետաց...»<sup>\*\*\*\*</sup>:

Ուստի Լազարյան եղբայրները խորհուրդ են տալիս կաթողիկոսին յոր բոլոր ձեռնարկությունները հաջողությամբ գլուխ հանելու համար Ներսես արքեպիսկոպոսին նորից Թիֆլիսի առաջնորդ նշանակի, որպեսզի իրեն մոտ և գործակից լինի:

\* Աղ. Երիցյան. Ամենայն մայոց կաթողիկոսությունը..., Ա. Բա. էջ 165—167:

\*\* Անդ. էջ 150:

\*\*\* Արիստակես Խաչատրյան. Մեղրակյան, Հովհ. Խաչ. Շահմասթունյանցի կննագրությունը, էջ 128:

\*\*\*\* Անդ. էջ 184:

Երկար դարերի ընթացքում հարևան մասնաշական ազգությանց հարըստանարությանց տակ ապրող երկիրը յոր խոր բնից միանգամից զարթնել չէր կարող, այդ թմրությունը նա իրենից անմիջապես թորափել չէր կարող, չնայած որ արդեն ազատագրված էր յոր նախկին դրությունից: Սուրկական թմրությունը դեռ երկար ժամանակ պիտի յոր ազդեցության տակ պահեր մարդկանց:



Գիրք սաղմոսաց. ս. Եղմանին. 1787 թ.

Այս ընդհանուր տիսոր հետևանքով Հովհաննես Ը կաթողիկոսը ոչ միայն Լազարյան եղբայրների իրենց նամակում շոշափած խնդիրները թողնում է առկայի, այլ և ինչ ինչ պատճառներով տպարանը տեղափոխում է Աստվածատոր կաթողիկոսի 1718 թվին շինած տնտեսատան մեջ: Այս և որից խըն-

իիրների պատճառով Հովհաննես կաթողիկոսը դժգոհություն է հարցածում իրն ուն և Եջմիածնի միաբաներից տաք Բոգի 1833 թվին մի բողոք են ներկայացնում իրներ, մեղադեկով նրան տոք «անտարձեր» վերաբեր մունքի և առնասարակ ամեն տեսակ բարեկարգությանց ասող լինելու համար:

Մայր Աթոռի տպարանի և դպրոցի երեխն երեխն անգործունեության մատնված լինելու շարյաց արմատները շատ հեռու ժամանակներում էր ձգված: Դուկաս, Դանիել և առավել Եփրեմ կաթողիկոսների օրով Երևանի խաների և սպավազների կողմից շարունակ կրկնվող հարատահարությունները Մայր Աթոռի տնտեսականը քայլայի էին:

Եփրեմ կաթողիկոսը դեռևս հայրապետական գահ չրարձրացած գրում է Պոլի Գրիգոր պատրիարքին, որ «համերում առողջերի» պահանջից ազատվելու համար քահրիպարյա թեսանեներ ուղարկի իրեն, որը Մամուկ վարդ Կյումյուշիանեցին «հազար հինգ հարյուր» դուրսով գնում է և Ծովակերցի տ. Թաղեան եպիսկոպոսի ձեռքով Նոր Նախիջևան ուղարկում\*:

Իսկ երբ Կյումյուշիանեցին և Մսկ մագիստրոսը ԺԹ դարի առաջին քառորդին Եջմիածնում էին գտնվում և տեսնում են Մայր Աթոռի տպարանի և դպրոցի անգործունեությունը, խնդիր են տալիս Սինոդին այդ հաստատությունները իրենց հանձնելու՝ կարգավորելու համար: Սինոդը և Եփրեմ կաթողիկոսը պարտի տակ բաղված լինելով՝ գրավոր կերպով պատասխանում են.

«Սուրբ Աթոռն ի պատճառ բազմադիմ անյաջողութեանց՝ չէ այժմ ձեռընհաս վերահաստանել զուտմարան իր ըստ կարգի և ըստ ամենայն հարկաւոր հանգամանաց, կամ ի գործ դնել զուպարանն և այնպէս վերակացուին նոցին ձեզ յանձնել»\*\*:

Այս նախընթաց տիտր դրությունը և Հովհաննես Ը կաթողիկոսի դեմ տված միաբանների բողոքը աչքի առաջ ունենալու հետո էլ, ըստ Երևույթին, թե՛ դպրոցը և թե՛ տպարանը լավ թե վատ 1884 թվին գոյացյուն են ունեցել:

Այդ երևում է Հովհաննես Ը կաթողիկոսի Բարոն Ռոզենին նոյն թվի նունակարի Յ1-ին գրած բացատրական գրությունից, որտեղ հիշատակում է, թե Արարատյան Ստեփան վարդապետը Սինոդի անդամության մետ միասին եղել է Աշանակված նաև Բոգևոր Վարժարանի կառավարիչ և Շահմարտունյան Հովհաննես վարդապետը՝ տպարանի և գրատան կառավարիչ: Բայց իր թե սոքա գործերը փոխանակ կարգավորելու խառնել են և պաշտոններից հրաժարվել: Ուստի և նոյն թվի մայիսի 22-ին Բարոն Ռոզենին գրած բացատրական նոր գրության մեջ ասում է.

«Երրորդ կետի վերաբերությամբ ծանուցանում ենք, որ մենք կարենվոյն չափ և ըստ քերման ժամանակի երեք չենք հապաղած գործով ապացուցանելու Եջմիածնի մեջ բարեկարգություն մտցնելու մասին, ի վկայություն որո են՝ վանքի պարսպում մեր Բոգևոր Վարժարանը, որ բավականաշափ երեխնայք ուսանելով զգալի պտուղ են ցուց տալիս յորյանց աշխատանաց և վանքի խախտված տպարանը, որ մեր օրով Աշանավոր ծախքերով վերանորոգված յօդուտ Եջմիածնական Աթոռի և առնասարակ Հայոց ազգի»\*\*\*:

Նոյն վերանորոգության մասին շեշտում է նաև Հովհաննես Ը կաթողի-

\* Դիաման Հայոց պատմութ., Գիրք ԺԲ, էջ 27;

\*\* Անո, էջ 128;

\*\*\* Անո, էջ 209:

կոսի կենսագիր Հովհանք և ապօղ կառավարանը, եթե նա առում է թե, «վերանորոգեաց զարարան» և Էջմիածնի գերապայծառ և ընդարձակ քան զարաչից»\*:



Խորմածատնոր սրբազն պատարագի. ս. Էջմիածն. 1788 թ.

1838 թվին տպված ժամագրի հիշատակարանից երևում է, որ արդ ժամանակ կառավարիչ է եղել վաղարշապատի Հովհաննես վարդապետ Մու-

\* Ա. Երիցան, Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայր. մաս Բ, Թիֆլիս, 1895, էջ 544:

րադրանը և վարպետ է նույն Հակոբյան Վլահոսը. առաջ շամբերի շնորհիվ տպարանը թեև բնելայի՞ սակայն շարունակել է ուր գործունեությունը և միաւնուելից Հովհ. նույն Շահմաքունյանը 1842 թվին տպագրում է ուր երկհատոր «Ստորագրութիւն և Էջմիածնի և նինգ գալատացն» արժեքավոր աշխատությունը:

Այդ միևնույն տարիներին Էջմիածնի տպարանը շնորհիվ տիրացու Ակադեմիա Հովհաննեսի Տեր Մկրտչյան Աֆանառովի ունեցել է ուր վիմագրատունը և այդ վիմագրատան «շարիս» մեջ առաջին անգամ տպվել է կայսր Նիկողոյ Պավլովիչի պատկերը: Այդ տարիվ Էջմիածնի միարան ծաղկազարդ Խամսակ նաև. Մ. Տեր Գրիգորյան երևանցին<sup>12</sup> 1839 թվին մայիսին (№ 29) մի նամակ է գրում Էջմիածնից Պետերբուրգի Բաջորդ Եփրեմ վարդապետ Ալթոնյանին, որուն նետույլ կարևոր տեղեկություններն են հաղորդում:

«Տեր Մկրտչյան Աֆանառով պարկեցու և համատարարու շնորհափառ և Ակադեմի 4 աստիճանաւոր տիրացու Յովհաննեսի սիրեցեալս մեր, որ յառաջ, զան զայս եկեալ էր ի կայսերախնամ տիրապահ քաղաքն Մօվկով առ ի ուստի ընկապնուոյ զարթեաւու տպարանի և զնկարչութիւն, որ և ուսեալ էր ըստ կարողութեան իրու զիտողրաֆի տպելն զանազան ձևն և զնկարչութիւնն... Նորին սրբազնաւոր վեհափառ Օծութիւնն (Հովհաննես Ը կաթողիկոսն նարքեցի) ի նորին Կայսերական Բարձրութեանն խնդրեալ էր վասն սորա, որ անդէն գայցէ այդ ի սուրբ Պետերբուրգ առ ի մոտանել եւակաղէմի ուստի հարաբեկն որ յազ ևս ուսցի. զենի վերադարձման նորին Կայսերական Բարձրութեանն աստիւն ի նոյն աշխան եկն դոյն Յովհաննեսի տիրացուն աստ. փայլցոյց զուսեալ շնորհն իր ի սուրբ Աթոռոց, որոյ տպարանի միջին յօրինեաց զմեծ մերենայ շարին մի լի լիտողրաֆի (բոլոր ընդգծումները մերն են.—Ա. Ե. Ա.), որով տպեաց զպատկեր բարեկամ հզօր թագաւորին մերս Հայաստանի և կայսերն Ուսուաց Նիկոլայ Պալօվիչի, որոյ Տեր տայցէ կեանս խաղաղական հանդերձ թագուհեան և ժառանգակցօրն, վասն պարծանաց սրբոյ Աթոռոյն և մերս աշխարհին. զենի տպելոյ պատկերին, որ տպեաց և զուարձացոյց Ն. Ա. Օծութեանն, և սրբազն Սինօթին և մեր ամեննեցուն, լուս դայ՝ թէ կայսրն հարցումն է արարել թէ ո՞ւր մնաց Աֆանառով ասացեալն հարկադրեցին, որ յանձն առնու գայն այդը, որ և ես յանձն զնեղութիւնն և զվիշոն յաղագ եւակաղէմի ուստինարանն մոտանելոյ որ Ն. Ա. Վ. Օծութիւնն է բարձր. սրբազն Սիննիոդուն ես բաշրորդ և ուղարկեցին գալ այդր իր աղքատ քանակ: Վասն որոյ ես, վասն Զեր աղօթամատոյց գոլով հանապազօր, խնդրեմ ձերդ հարազատ եղբայրութեանն հայրական շնորհ ցուցանէք դմա ի միմիրարութիւն պանդիստութեան իրոյ, որում այնքան սիրեցի և այնքան սիրեմ որպէս հարազատ եղոր, վասնորոյ փափագեցի այսու գրովս հարցանել զուցութեանն Զերմէ, և յանձն առնու զդայ ի շնորհս մարդասիրութեան Զերոյ ի պատին և ի պարծանս սրբոյ Աթոռոյս ի մէր մերս նուասութեան:

Եւ մինչ եկն այսր դոյն տիրացու Յովհաննեսին, ըստ որում ամուսնացեալ էր յառաջազոյն, սուացա Աստուծով գորդի մի սիրելի Մկրտիչ անուն իշխատակ իմբենան, զոր Տեր պահպանեացէ աղօթի Զերով վասն իրոյ միմիրարութեան: Խնդրեմ յառաջազոյն քան զայս, որ գրեալ եմ առ սէրդ իմ, գրեսցես մեզ զպառասխանի գրոց ցմծալով և այլն... մերս բազմաշխատ Ակադեմ Յովհաննեսին ևս է այդը, մերս կողմանն սիրեցեալ աղա Յովհաննես ևս է այդը, մերս կողմանն սիրով և օրմնութեամբ մատուցես մամ զողջոյն և օրինութիւն անթառամելի սիրով:

Հիւրընիալ Յովհաննես վարդապետն մեծի պահոց աւագ շաբաթն տկա-


րացաւ և գնացեալ Երևան վախճանմեցաւ ամդ և թերեալ ի սուրբ Գայիանէի վանքն, անդ օծին Սաւագ ուրբաթ օրն, և թերեալ ի գերեզմանատունն հանգուցին... եր սա ամդամ Սինօթի և տպարանի կառավարիչ»<sup>\*</sup>:



Զայնար շարական ս. Եջմիածին. 1833 թ.

ԺԹ դարի սկզբին Եջմիածնի դրույթումը խիստ ամնախանձելի էր. կարելի էր ասել վանքը ավերակ ու կողոպտված դրույթան մեջ էր: Դավիթ-Դա-

\* Դիտան Հայոց պատմութեան, գիրք ԺՄ. Սիմեոն Կայտաղիկոսի Յիշարակարանը, մաս II—վերջին (1777—78), Թիֆլիս, 1913, էջ 464—466:



Ահելյան երկարատև խոռվարթանը, պարսից բարբարուսական ասպասուկությունները, որ տևեցին մինչև այդ դարի առաջին քառորդի վերջը, ուստաձև զորքերի մի քանի անգամ Արարատյան դաշտ և առևտութակ Կոմիլու գազի

**ՅՈՒՆՅԱՅՅ**

**1.** ամսապես կորդեսդ և առհմենեալ  
սբյն Առհմեկաց Պարփճեւի Հոյրպատին  
հայոց ըօտ առանդուէ հոյառառանեաց  
սբյն Հկեղեցւոյ :

**2.** Եւ զինի յոգնածուն կորդեսորուք և  
աշխատատիրուք Տուն Առմեօնի Արքան  
Արթուրին՝ յեւկու հուարու բաժա-  
նեալ, և յահանկերան Աթոռս որ Լ. Հ.  
մասմին առպազրեալ :

**3.** Առդէն ևս՝ ըստ նմին օրինակի ՚ի վե-  
հաբուռ Հոյրուպետուէ Արարատեան  
Արք Աթոռոց սբյն կործւղեւ Հաջմաննի  
Տան Յ. Կրորդ Յակովստիու կորրեցւոյ  
Աթշնտիր Ակմեղեկոս ամ Հայոց և Ապէ  
սի սբյն Աղեքանդրի նևացւոյ :

և ՚ Երեխ Բակ ։  
Բարբարագյն հրամանաւ մըրատին եղեւ  
ապսպարեալ :

Յամի Տուն 1835, և ՚ի թաւին հայոց ո. Թ. Հ. ։

Դ սբյն Աղեքանդրի նևացւոյ :

Տօնացոյց ս. Էջմիածին. 1885 թ.

ու վերադարձը, խիստ աղեստալի նետամբերը ունեցան վանքի համար: Բա-  
նիմաց միարանները թեռացած էին, «եղած մոնթենը ցրված, ժամասացու-  
թյունը խանգարված, շինությունները փլած ու մենաստանին առաջվա շուրջ  
ու համրավը վերացած»\*:

(Ժարուհակելի)

\* Ա. Երիցյան, Պատմություն Ներսիսյան դպրոցի, էջ 24: